Սիս՝ Հօրքվերորդի Լեւոնի և եղբայր Ջիւանի՝ իշխեաց երկու ամ: Սոքա եղբարք ազգակիցք գոլով Ֆռանկաց, Հայք սպանին զնոսա:

Լեւոն իբր թագաւոր նստեալ ԺԸ. ամիս, և լուեալ Սուլթանն Մըսրայ՝ եկն բազում զօրօք, և ըմբռնեալ զԼեւոն՝ Մարուն թագուհեաւն, և տարաւ 'ի Մըսր և կորոյս զԼեւոն. զվանորայս, զեկեղեցիս, զհիւրանոցս և զմեծամեծ շինուածս կործանեաց: Իսկ 'ի պալատս թագաւորաց եղեալ զապանակսն լի ոսկով և զայլ կահս ոսկեղէնս և արծաթեղէնըս աւար առին: Զշիրիմս թագաւորաց բացին, և զոսկերսն այրեցին, և զՍիս 'ի հիմանցն տապալեցին. և բարձաւ թագաւորութիւնն 'ի տանէն Կիլիկեցւոց 'ի ՊԻԵ. թուին:

Կատարումն սոտ գաւազանի ազգաբանութեան թագաւորացն Հայոց, համա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան